



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

43 41

1508

89171

S-80

0158-29/xii-26

12003

2003

391/71-3
5-70

Հրատ. Թիֆ. Աշխ. Հայերէն գրքերի Հրատարակութեան

№ 31

ԿՈՄՍ Լ. ՏՈՒՍՏՈՅ

ԱՍՏՈՒԱԾ ԴԻՏԷ

ԱՐԴԱՐՆ ՈՒ ՄԵՂԱԻՈՐԸ

ԲԱՅՑ ԴԱՏԱՍՏԱՆԸ ՇՈՒՏ ԶԻ ԱՆՈՒՄ

Քարգմ. Մ. Ա.

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Тип. М. Вартанянца, Тройц. переул. д. № 11.

Տպարան Մոզսէս Վարդանեանի

1891

ընկերութեան հետեւեալ հրատարակութիւնները վաճառվում են ընկերութեան գրասենեակում եւ «Կենդրոնական գրախ-
ճառանոցում».—

	Ռ. Կ.
1. Թաւամազ մեղու, թարգմ. օր. Ն. Տէր-Մարկոսեան	— 40
2. Կարմիր լապտեր, թարգմ. օր. Ն. Տէր-Մարկոսեան	— 50
Նոյնը առանց կազմի	— 30
3. Թովմաս եղբոր տնակը, թարգմ. օր. Ն. Տէր-Մարկոսեան	— 60
Նոյնը առանց կազմի	— 45
4. Մանկական երգեր, Գամառ-Քաթիպա	— 25
Նոյնը առանց կազմի	— 15
5. Մորելս եւ Նրա ջնջելու հնարները. Հ. Տէր-Բարսեղեանի	— 10
6. Առողջապահական ընթերցանութիւն . Նեղ եւ խոնաւ բնակարանների մասին. Հ. Առաքելեանի	— 10
7. Սրբոյ Հօրն մերոյ Մովսիս Խորենացւոյ Պատմութիւն Հայոց	— 80
8. Փոքրիկ ձեռնարկ Գործնական տնտեսութեան, Մօրիս Բլօքի, փոխադր. Ս. Պալասանեանցի	— 50
9. Ռօբինզօնի սլատմ. թարգմ. Գիւտ քհն. Աղանեանցի	— 60
10. Գամառ-Քաթիպայի բանաստեղծ. կազմ. Նոյնը առանց կազմի	1 20 — 50

6001

Հրատ. Թ. Բ. Բնի. Հայերէն գրքերի Հրատարակութեան

891.71

№ 31

S-80
այ.

ԿՈՄՍ Լ. ՏՈԼՍՏՈՅ

Ա Ս Տ Ո Ւ Ա Շ Գ Ի Տ Է

ԱՐԴԱՐՆ ՈՒ ՄԵՂԱԻՈՐԸ

ԲԱՅՅ ԴԱՏԱՍՏԱՆԸ ՇՈՒՏ ԶԻ ԱՆՈՒՄ

1002
6244
9

Թարգմ. Մ. Ա.



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Тип. М. Вартамянца, Тройц. переул. л. № 11

Տ ա ա ռ ա ն Մ ո ղ ս է ս Վ ա ռ դ ա ն ե ա ն ի

1891

Дозволено Цензурою, Тифлисъ, 18 февраля 1891 г.

ԱՍՑՈՒՄԺ ԳԻՑԷ ԱՐԴՍՐՆ ՈՒ ՄԵՂՍԻՈՐԸ

ԲՍ.ՅՅ ԴԱՏԱՍՏԱՆԸ ՇՈՒՏ ԶԻ ԱՆՈՒՄ

(Պատահած դէպք)

Ռուսաստանի Վլադիմիր շաղաքում մի երիտասարդ վաճառական կար. անունն էր Օհան Ա. քսենով: Նա երկու խանութ և մի տուն ունէր:

Ա. քսենովը շէկ ու խուճուճ մազերով, ուրախ սրտով, հանաքչի, լաւ խող ասող մի գեղեցիկ տղամարդ էր: Զահիլ ժամանակ Ա. քսենովը շատ էր խմում և, երբ որ հարբում էր, գոլթիւններ էր անում. բայց պսակուելուց յետոյ նա խմելը/թարկը տուաւ, և միայն մէկ-մէկ կը պատահէր, որ խմէր:

Մի անգամ, ամառը, Ա. քսենովը գնաց Նիժնի տոնավաճառի: Երբ որ մնաս բարեւ էր ասում իր ընտանիքին, կինն ասաց նրան.

—Օ՛հան, եկ դու այսօր ճանապարհ մի՛ ընկնիլ, ես քեզ համար վատ երազ եմ տեսել:

Ա. քսենովը ծիծաղեց ու ասաց.

—Դու էլի միշտ վախենում ես, որ չլինի՞ թէ տօնավաճառում քէֆ անեմ, հարբեմ:

Կինն ասաց.

—Ես ինքս էլ չեմ իմանում, թէ ինչո՞ւ եմ վախենում, բայց, այնպէս, վատ երազ եմ տեսել այս գիշեր: Երազումս տեսայ՝ ո՞ր իբր թէ դու քաղաքից յետ ես գալիս. եկա՛ր, դիտարկե՛ հանեցիր, իսկ ես մտիկ եմ տալիս՝ գլուխդ ամբողջ սպիտակել է:

Ա. քսենովը սկսեց ծիծաղել.

—Ե՛հ, այդ երազը բարի է, սպիտակ մազեր տեսնելը շահ է և հարստութիւն: Կըտեսնես՝ ինչպէս լաւ առուտուր կ'անեմ, թանգագին ընծաներ կըբերեմ:

Եւ նա իր ընտանիքին մնաս բարեւ ասաց ու ճանապարհ ընկաւ:

Ճանապարհի կիսում պատահեց մի ծառնօթ վաճառականի և նրա հետ միտեղ վէր եկաւ գիշերելու: Նրանք երկուսը միասին թէյ խմեցին, միասին էլ երկու իրար կից սենեակում պառկեցին՝ քնեն: Ա. քսենովը երկար քնել

չէր սիրում. կէս գիշերին զարթնեց և, որպէս զի հովով աւելի թեթեւ ճանապարհ գնայ, կառապանին վեր կացրեց և հրամայեց, որ լծի: Յետոյ դուրս եկաւ, մտաւ իջևանի տիրոջ սենեակը, նրա հետ իր հաշիւը տեսաւ և ճանապարհ ընկաւ:

Մօտ քառասուն վերստ ճանապարհ կտրեց և վէր եկաւ, որ ձիերին կեր տան. իջևանի սենեակներից մէկում հանգստացաւ և ճաշին դուրս եկաւ դռանը նստեց: Հրամայեց՝ սամալարը դնեն, իսկ ինքը կիթառը հանեց, ձեռքն առաւ ու սկսեց ածել: Կիթառն ածում էր, որ մէկ էլ մտիկ տուաւ տեսաւ՝ հրէս զընգզնգալով մի փոստի սայլակ է գալիս դէպի իջևանը: Սայլակն եկաւ, կանգնեց, սայլակից վէր եկաւ մի աստիճանաւոր, հետն էլ երկու զինուոր: Աստիճանաւորը մօտեցաւ իրեն Ա. քսենովին և հարցրեց, «Ո՞ր ես, ո՞րտեղացի ես»: Ա. քսենովը բոլորը, ինչպէս կար, պատմեց և խնդրեց. «արդեօք չէ՞ք ուզիլ միասին մի բաժակ թէյ խմենք»: Բայց աստիճանաւորն Ա. քսենովից ձեռք չէր վերցնում, շարունակ հարցուփորձ էր անում. «Անցած գիշերը ո՞րտեղ անց կացրիր: Մենակ էիր, թէ՞ վաճառականի հետ: Առաւօտը վաճառականին

տեսել ես, թէ չէ: Ինչո՞ւ ես առաւօտը շուտով դուրս եկել իջեանից»: Ա. քսենովը զարմացած մնաց, թէ ինչո՞ւ են իրեն այդ ամենը հարցնում, ամեն բան պատմեց, ինչպէս եղել էր, և յետոյ ասաց.

— Ի՞նչ էք ինձ այդպէս հարցուփորձ անում. ես խօսող-աւագանի չեմ: Իմ գործով գնում եմ, ինձ հարցուփորձ անելու բան չունիք:

Աստիճանաւորն այն ժամանակ՝ ձայն տուեց զինուորներին և ասաց.

— Ես ոստիկան եմ և քեզ նրա համար եմ հարցուփորձ անում, որ այս գիշեր սպանել են այն վաճառականին, որի հետ միասին դու վէր էիր եկել եջեանում: Յոյց տուր իրեղէններդ, իսկ դո՞ւք խուզարկեցէք նրան:

Մտան խրճիթը, վեր առան պոլսոսական ու տուրքակիր, բաց արին և սկսեցին քրքրել, ման գալ: Յանկարծ ոստիկանը տուրքակից մի դանակ հանեց և կանչեց.

— Այս ո՞ւմ դանակն է:

Ա. քսենովը մտիկ տուաւ, տեսաւ— իր տուրքակից մի արիւնոտ դանակ հանեցին, և վախեցաւ:

— Այս դանակն ինչո՞ւ է արիւնոտ:

Ա. քսենովն ուզում էր պատասխան տալ,

բայց լեզուն կապ ընկաւ, մի խօսք էլ չկարողացաւ ասել:

— Ես... ես չգիտեմ... ես... դանակը, ես... իմը չէ...

Այն ժամանակ ոստիկանն ասաց.

— Առաւօտը վաճառականին անկողնի մէջ սպանուած են գտել, և բացի քեզնից՝ ուրիշ մարդ չէր կարող այդ բանն անել: Խըրճիթը ներսից կողպած է եղել, իսկ խրճիթում՝ բացի քեզնից՝ ուրիշ մարդ չի եղել: Հրէս արիւնոտ դանակն էլ տուրքակուծ է, հենց երեսիցդ էլ է երևում, որ դու ես սպանել: Առա՛ւ ճիշտպէս սպանեցիր նրան և ճիշտ փող գրուփեցիր:

Ա. քսենովը երդում, կրակն էր ընկնում, որ ինքը չի արել այդ բանը, որ ինքը վաճառականին՝ նրա հետ թէյ խմելուց յետոյ էլ չի տեսել, որ իր մօտ միայն իր 8,000 ռուբլի փողն է, իսկ դանակն իրենը չէ: Բայց նրա ձայնը խզում էր, երեսը սփրթնել էր, և վախից ամբողջ մարմնով դողում էր, կարծես՝ յանցաւոր լինէր:

Ոստիկանը զինուորներին կանչեց, հրամայեց, որ նրան կապոտեն և սալի վրա

դենն: Երբ որ Աքսենովին՝ ոտները կապած՝ սալի վրայ գցեցին, նա երեսին խաչ հանեց և լաց եղաւ: Աքսենովի երեղէններն ու փողերը ձեռքիցն առան և իրեն ուղարկեցին մօտիկ քաղաքի բանդը: Մարդ ուղարկեցին Վլադիմիր քաղաքը, որ իմանան թէ ինչպիսի մարդ է Աքսենովը: Վլադիմիրի բոլոր վաճառականներն ու բնակիչներն ասացին, որ Աքսենովը ջահիլ ժամանակը խմող, քէֆ անող էր, բայց լաւ մարդ է: Այն ժամանակ սկսեցին նրան դատել: Աքսենովին նրա համար էին դատում, որ սպանել էր Ռեազանցի վաճառականին և գողացել նրա 20,000 ռուբլի փողը:

Կինը մարդու համար իրեն քարով-սարով էր տալիս և չէր իմանում թէ ինչ անի: Նրա երեխէքը բոլորը դեռ ևս փոքր էին, մէկն էլ ծծի երեխայ էր: Կինը բոլոր երեխաներին հետն առաւ, գնաց այն քաղաքը, որտեղ իր մարդը բանդն էր ձգուած: Սկզբում կնոջը ներս չէին թողում, բայց յետոյ մեծաւորներին խնդրեց, և նրան մարդու մօտ տարան: Երբ որ նա մարդուն տեսաւ կալանաւորի հագուստով, ոտներին շղթաներ,

աւազակների հետ միասին,—վէր ընկաւ գետնին, և երկար չէր կարողանում ուշքի գալ: Յետոյ երեխաներին իր չորս կողմում նստեցրեց, ինքն էլ մարդու կողքին նստեց ու սկսեց պատմել նրան տան գործերից և մարդուն հարցրեց բոլորը, ինչ որ պատահել էր նրան: Մարդն ամեն բան պատմեց կնոջը և Կինն ասաց.

—Ի՞նչ անենք հիմա:

Մարդն ասաց.

—Պէտք է թագաւորին խնդիրք տանք: Խօսմ չի՞ կարելի որ մարդ անմեղ տեղը կորչի, գնայ:

Կինն ասաց, որ ինքն արդէն խնդիրք է տուել թագաւորին, բայց խնդիրքը տեղ չի հասել: Աքսենովը ոչինչ չասաց և միայն, լուռ ու մունջ, աչքերը գետին գցեց: Այն ժամանակ կինն ասաց.

—Բա՛ որ ես այն ժամանակ, մե՛տդ է, ասում էի՝ երազումս տեսայ, որ դու հալեւորել ես: Հրէս, զորդ որ ցաւից հալեւորել ես արդէն: Ո՛չ լինէր քո այն օրուայ գնալդ:

Եւ նա սկսեց մարդու մագերը դրստել ու ասաց.

—Օ՛հան, հոգիւս հատոր, ճշմարիտն ասա՛ կնոջդ՝ խօս դո՛ւ չես արել այդ:

Աքսենովն ասաց.

— Դժու էլ ես ինձ վրայ կարծիք տանում.—
«Աձեռքերով երեսը ծածկեց ու լաց եղաւ: Յե-
տոյ զինուորն եկաւ և ասաց, որ կինն երե-
խաների հետ պետք է դուրս գնայ: Եւ Աք-
սենովը վերջին մնաս բարեն արեց իր ընտա-
նիքին:

Երբ որ կինը դուրս գնաց, Աքսենովը
սկսեց մտաբերել՝ ինչ որ իրենք խօսեցին: Երբ
որ լիջեց, որ կինն էլ իր վրայ էր կարծիք
տանում և հարցնում թէ խօսմ ինքը չի սպա-
նել վաճառականին,— նա ինքն իրեն ասաց.
«Երևի, բացի Աստուծուց՝ ոչով չի կարող իմ
արդար լինելս իմանալ, և միայն Նրան պետք
է աղաչել և Նրանից միայն ողորմութիւն յու-
սալ»: Այն ժամանակից սկսած Աքսենովը է՛լ
խնդիրք չէր տալիս, է՛լ յոյսը կորցրել էր և
միայն Աստուծուն էր աղաչանք անում:

Դատաստան արին և վճռեցին Աքսենո-
վին մտրակով պատժել և յետոյ Սիբիր տաժա-
նակիր աշխատանքի ուղարկել: Այդպէս էլ
արին:

Նրան մտրակով մի լաւ ծեծեցին և յե-
տոյ, երբ որ մտրակից ստացած վէրքերը լա-

ւացան, ուրիշ քրէական յանցաւորների հետ
Սիբիր քշեցին:

Սիբիրում Աքսենովը քսանվեց տարի ապրեց
տաժանակիր աշխատանքի մէջ: Նրա գլխի մա-
զերը ձիւնի պէս սպիտակեցին, և նեղ ու սպի-
տակ միրուքը եկաւ, երկարեց: Նրա սրտի բոլոր
ուրախութիւնը կորաւ: Մէջքը կռացաւ, սկսեց
հանդարտ ու ծանր ման գալ. քիչ էր խօ-
սում. երբէք չէր ծիծաղում և շարունակ Աս-
տուծուն աղօթք էր անում:

Բանդի մէջ Աքսենովը կօշիկ կարել սո-
վորեց և աշխատած փողով մի տւետարան
գնեց. լուր օրերը, երբ որ բանդի մէջ լոյս էր
լինում, աւետարանն էր կարդում, իսկ տօն
օրերը գնում էր բանդի եկեղեցին, գիրք էր
կարդում և դասում կանգնած երգում էր:
Նրա ձայնը դեռ ևս առաջուան պէս լաւ էր:

Բանդի կառավարիչը Աքսենովին սիրում
էր նրա հեղութեան ու խոնարհութեան հա-
մար, իսկ բանդարկեալ ընկերները յարգում
էին նրան և «պապի» ու «արդար Օհան»
էին անուանում: Երբ որ պետք էր լի-
նում, որ մի բան խնդրէին,— ընկերները
միշտ Աքսենովին էին կառավաւչի մօտ ու-

դարկում, որ նա խնդրի. իսկ երբ բանդարկեալ-
ների մէջ վէճ ու կռիւ էր պատահում, միշտ Ա. ք-
սենովի մօտ էին գալիս, որ նա դատաստան անի:

Տնից ոչ ոք Ա. քսենովին նամակ չէր գրում,
և նա չգիտէր՝ իր կինն ու երեխէքը կեն-
դանք են, թէ ոչ:

Մի անգամ նրանց մօտ նոր կալանաւոր-
ներ բերեցին: Երեկոյեան բոլոր Հին կալա-
նաւորները նորեկների չորս կողմը հաւա-
քուեցին և սկսեցին հարցուփորձ անել թէ՝
որը որ քաղաքից, որ գիւղից է, և ով ինչ
գործի համար է աքսորուել: Ա. քսենովն էլ
նստած էր տախտի վրայ, նորեկների կշտին
և, աչքերը գետին գցած, լուռ ու մունջ
ականջ էր դնում թէ ով ինչ է ասում: Նոր
կալանաւորներից մէկը մի վաթսուս տարե-
կան, բարձրահասակ, առողջ ծերունի էր,
սպիտակ, խուզած միւրուքով: Այդ ծերունին
պատմում էր թէ ինչի համար են իրեն բռ-
նել: Նա ասում էր.

— Այսպէս, եղբայրներ, ոչինչ բանի համար
ես այստեղ ընկայ: Կառապանի ձին բաց էի:
արել սահնակից: Բռնեցին,— ասում են՝ գո-
ղացել ես: Իսկ ես ասում եմ՝ բաց արի միայն,

որ շուտ տեղ հասնեմ,— ձին յետոյ բաց եմ
թողել: Կառապանն էլ խօ. բարեկամս է:
Ասում եմ՝ այս օրէնք է, որ ինձ բռնում էք:

— Չէ՛, ասում են, գողացել ես, որ գողա-
ցել: Բայց էլ է՛ն չեն իմանում թէ՛ որտեղ
ինչ եմ գողացել: Դէ՛ եկ աշխարհիս բանը
տես. բաներ են եղել, որ ես վաղուց պէտք է
այստեղ ընկած լինէի, բայց որ բռնել չեն
կարողացել. իսկ հիմա ինձ անարգար դատաս-
տանով են քշել այստեղ:

— Չէ՛, սուտ ես ասում, Սիբիրում եղել ես,
բայց երկար չես քէֆ քաշել այստեղ...

— Հրամանքդ որտեղացի ես, հարցրեց կալա-
նաւորներից մէկը:

— Ես վաղեմիբցի եմ, Վլադիմիր քաղաքի
բնակիչ: Անունս Մակար է, հօրս անունը
Սիմոն:

Ա. քսենովը գլուխը բարձրացրեց ու հար-
ցրեց.

— Ի՞նչ կայ, թէ՛ն չկայ, Մակար ապէր. Վլա-
դիմիր քաղաքում իսկի վաճառական Ա. քսե-
նովների անունը լսել ես: Կենդանք են, թէ չէ:

— Ի՞նչպէս չեմ լսել: Հորուստ վաճառական
են, չնայելով՝ որ իրենց հայրը Սիբիրումն է:
Երեւի, նա էլ մեզ պէս մեղաւոր մարդ է

եղել: Իսկ դժուար, պատի, քնչ բանի համար ես այստեղ ընկել:

Աքսենովը չէր սիրում իր դժբախտութեան վրայ խօսել. նա յոգևոց հանեց և ասաց.

— Իմ մեղքիցը այս քսանվեցերորդ տարին է, որ տաժանակիր աշխատանքի մէջ եմ:

Մակարն ասաց.

— Իսկ քո մեղքն էդ քնչ տեսակ մեղքերիցն է:

Աքսենովն ասաց.

— Երևի, էն տեսակ, որ ես արժանի եմ եղել այս պատժին, — և էլ ոչինչ չուզեց պատմել: Բայց միւս բանդարկեալ ընկերները նորեկին պատմեցին թէ քնչպէս է Աքսենովը Սիբիր ընկել: Նրանք պատմեցին թէ քնչպէս ճանապարհին մէկ ուրիշը սպանել է վաճառականին և դանակն Աքսենովի տոպրակի մէջ է դրել ծածուկ, և թէ քնչպէս սրա համար խեղճին զուր տեղը դատապարտել են:

Երբ որ Մակարն այս լսեց, Աքսենովի վրայ նայեց, ձեռները ծնդներին խփեց ու ասաց.

— Այ հրաշք. այ զարմացք բան: Հալւո՞րել ես, պատի, հալւո՞րել:

Սկսեցին հարցովորձ անել նրան, թէ ինչո՞ւ զարմացաւ, թէ որտեղ է տեսել Աքսենովին. բայց Մակարը ոչինչ չպատասխանեց և միայն ասաց.

— Զարմացք բան է, տղէք, որտեղ ենք իրար պատահում. ո՞վ կըսպասէր, որ այստեղ իրար պիտի տեսնենք:

Այս խօսքերի վրայ Աքսենովի գլխովն այն անցաւ թէ արդեօք այս մարդը չի իմանում՝ ո՞վ է սպանել այն վաճառականին: Նա ասաց.

— Մակար ապէր, դու ինձ առաջ տեսել ես, կամ թէ այս գործի մասին բան լսել ես:

— Ի՞նչպէս չեմ լսել, հէր օրհնած, ձայնն աշխարհքս վեր էր հալել: Բայց այդ վաղուցուց բան է, լսածս էլ մոռացել եմ, — ասաց Մակարը:

— Կարելի է, լսած լինիս վաճառականին սպանողն ով էր, հարցրեց Աքսենովը:

Մակարը սկսեց ծիծաղել ու ասաց.

— Խօսք չկայ, որ նա կըլինի սպանողը, ում տոպրակից որ դանակը հանել են: Թէ մի ուրիշ մարդ է սպանել ու դանակը տոպրակիդ մէջ դրել ծածուկ — և չի՞ բռնուել — ասել է գող չի: Բայց քնչպէս կարելի է, որ դանակը տոպրակիդ մէջ դնէին. չէ՞ որ տոպրակը գլխատակիդ է եղել: Գուռ խօմ կ'իմանայիր:

Հենց որ Աքսենովն այս խօսքերը լսեց, մտածեց որ այս մարդն է վաճառականին սպանողը: Նա վեր կացաւ, հեռացաւ: Ամբողջ գիշեր Աքսենովը չկարողացաւ քնել: Սիրտն սկսեց նեղանալ, տակն ու վրայ լինել, և նրա աչքի առաջ շատ հին բաներ եկան, քնացին. մէկ նրա աչքին երևում էր իր կինը — այն տեսակ, ինչ տեսակ որ էր, երբ որ վերջին անգամ իրեն ճանապարհ էր դնում դէպի տօնավաճառ: Հենց իմանաւ իր կինն ինչպէս կենդանի կանգնած լինէր առաջին, և ինքը տեսնում էր նրա երեսն ու աչքերը, և լսում էր թէ ինչպէս խօսում, ծիծաղում էր իր հետ: Յետոյ Աքսենովի աչքին երևում էին երեխէքը — այնպէս, ինչպէս որ էին այն ժամանակ — մանրիկ, փոքրիկ երեխաներ, մէկը մուշտակ հագած, միւսը մօր զրկին, իրեն էլ յիշեց նա, ինչպէս որ էր այն ժամանակ — ուրախ ու ջահիլ. յիշեց, ինչպէս ինքը նրստած էր իջևանի դռանը՝ սրահում, ուր բռնեցին իրեն՝ կիթառ ածելիս, և ինչպէս իր սիրտն ուրախ էր այն ժամանակ: Յիշեց և պատժարանը, որտեղ ծեծեցին իրեն, յիշեց և դահճին, և չորս կողմի ժողովրդին, և շղթաները, և կալանաւոր

1002
6244

ընկերներին, և իր քսանվեց տարուայ կեանքը բանդի մէջ, վերջը իր ծերութիւնն էլ յիշեց: Եւ Աքսենովի սիրտն այնպէս նեղացաւ, կտրաւորեց, որ քիչ մնաց՝ ինքն իրեն սպանի: — Եւ այս բոլորն այն չարագործի ձեռքով է եղել... մտածում էր Աքսենովը:

Եւ նրա բարկութիւնն այնպէս էր զաւիա Մակարի վրայ, որ թէկուզ ինքն էլ կորչելու լինէր, ուզում էր վրէժն առնէր նրանից: Նա ամբողջ գիշերն աղօթք էր անում, բայց չէր կարողանում հագստանալ: Յերեկը մօտենում էր Մակարին, բայց նրա երեսին չէր նայում:

Այսպէս անց կացաւ երկու շաբաթ: Գիշերներն Աքսենովը չէր կարողանում քնել, և սիրտն այնպէս էր նեղանում, որ չէր իմանում՝ գլուխը ո՞ր քարին տալ:

Մի անգամ գիշերը, նա բանդի միջով անց էր կենում, տեսաւ որ մի տախտի տակից հող է թափւում: Կանգնեց, որ տեսնի թէ զա ինչ բան է: Յանկարծ Մակարը տախտի տակից դուրս թռաւ և սարսափած դէմքով՝ Աքսենովին նայեց: Աքսենովը ուզում էր անց կենալ, որ Մակարի երեսը չտեսնի, բայց Մակարը նրա ձեռքից բռնեց և պատմեց թէ

ինչպէս ինքը պատի տակից անցք է փորում, և թէ ինչպէս ինքն ամեն օր հողը, կօշկի ճիւղերի մէջ ածած, դուրս է տանում, փողոց թափում, երբ որ իրենց աշխատանքի են քշում: Նա ասաց.

— Լուիս միայն, ծերո՞ւկ, ես քեզ էլ կ'ազատեմ այստեղից: Թէ որ ասես, ինձ կըծե՞ծեն, բայց դու էլ ձեռքիցս չես պըծնիլ—կըսպանեմ քեզ:

Աքսենովն երբ որ իրեն դժբախտացնող չարագործին տեսաւ, ձեռքը ետ քաշեց և ասաց.

— Դուրս գալն իմ ինչքս է պէտք, իմ էլ քնչս պիտի սպանես. դու ինձ արդէն վաղուց ես սպանել: Բայց թէ քո արածը կ'ասեմ թէ չեմ ասիլ,—այդ Աստուած գիտէ:

Միւս օրը, երբ կալանաւորներին աշխատանքի դուրս հանեցին, զինուորները նկատեցին, որ Մակարը հող էր շաղ տալիս: Բանդը ման եկան և մի ծակ գտան: Մեծաւորը բանդն եկաւ և սկսեց ամենքին հարցնել՝ ո՞վ է ծակը փորել: Ամենքն էլ պատասխանում էին թէ՝ չգիտենք: Իմացողներն էլ չէին մատնում Մակարին, որովհետեւ գիտէին, որ այդ բանի հա-

մար նրան մինչև կիսամեռ լինելը կըծե՞ծեն: Այն ժամանակ մեծաւորը Աքսենովին դիմեց: Նա գիտէր, որ Աքսենովը ճշմարտախօս մարդ էր, և ասաց.

— Ծերուկի, դու արդար մարդ ես, ասա՞ առաջի Աստծու, ծակն ո՞վ է փորել:

Մակարն այնպէս էր կանգնած, իբր թէ ինքը բանից խաբար չէր. մեծաւորի երեսին էր նայում և մինչև անգամ շուռ էլ չէր գալիս Աքսենովի կողմը: Աքսենովի ձեռքերն ու շրթունքները դողում էին, և նա երկար չէր կարողանում բերանը բանալ ու մի խօսք ասել: Նա ինքն իրեն մտածում էր. «Թէ որ չասեմ՝ Մակարն է—նա կ'ազատուի. բայց ես ինչո՞ւ պիտի չասեմ, ինչո՞ւ պիտի ներեմ նրան, քանի որ նա է ինձ կորցրել, քամբախտացրել: Թո՛ղ իմ կրած տանջանքի համար արժանի պատիժն ստանայ: Իսկ եթէ ասեմ՝ նա է—դուրդ է նրան լաւ կըծե՞ծեն, բայց վայ թէ՛ դուր տեղն եմ կասկածում նրա վրայ. բն որ վաճառականին սպանողը նա չլինի: Մէկէլ՝ միթէ դրանով իմ բանը կըթեթեւանայ»:

Մեծաւորը մի անգամ էլ հարցրեց.

— Դէհ, քնչ ես կանգնել, ծերուկի, ճշմարիտն ասա՞ ծակն ո՞վ է փորել:

Աքսենովը Մակարի վրայ նայեց և ասաց.
— Չեմ կարող ասել, աղայ, Աստուած չի
հրամայում, որ ասեմ: Ինչ որ կ'ուզէք, արէ՛ք
ինձ— իշխանութիւնը ձեր ձեռքին է:

Մեծաւորն ինչքան էլ զօրեց, ինչքան դէս-
ու դէն շուռ տուեց, Աքսենովն էլ բան
չասաց: Հենց այդպէս էլ մնաց, և չիմացան
ծակն ով էր փորել:

Միւս գիշերը, երբ Աքսենովը, իր տախտի-
վրայ պառկած, նոր սկսել է ննջել, մէկէլ
լսեց, որ մէկը մօտեցաւ, նստեց տախտի վրայ,
իւր օտները տակին: Նա մթնումը մտիկ
տուաւ և ճանաչեց Մակարին: Աքսենովն
ասաց.

— Ի՞նչ ես ուզում ինձնից: Ի՞նչ բան ունիս
այստեղ:

Մակարը լուռ մնաց: Աքսենովը տեղից
վեր կացաւ և ասաց.

— Է՛լ ի՞նչ ես ուզում: Հեռացիր, թէ չէ գի-
նուորին ձայն կրտամ:

Մակարը մօտեցաւ, թեքուեց դէպի Աքսե-
նովը և շշնջալով ասաց.

— Օհան ապէր, ներքի ինձ:

Աքսենովն ասաց.

— Ի՞նչ ես արել, որ ներեմ քեզ:

— Ե՛ս եմ վաճառականին սպանել, դանակն
էլ ես եմ տօպրակիդ մէջ դրել: Ես քեզ էլ
էի ուզում սպանել, բայց բաղումը ձէնու-
ձուն բարձրացաւ, դանակը տօպրակիդ մէջ
մտցրի իսկոյն և պատուհանից դուրս թռայ:

Աքսենովը լուռ էր, չէր իմանում թէ
ինչ ասի: Մակարը տախտից վեր եկաւ, Աքսե-
նովի ոտներն ընկաւ և ասաց.

— Օհան ապէր, ներքի ինձ, Աստուծու սի-
րուն: Ես կըզնամ, կըյայտնեմ, որ ես եմ վա-
ճառականին սպանողը. քեզ կըներեն ու կ'ա-
զատեն, և տուն կըվերադառնաս:

Աքսենովն ասաց.

— Ասելը կ'ասես, այդ հեշտ է, բայց էս ինչպէս
համբերեմ: Այժմ ո՛ւր պիտի գնամ... Կինս
մեռել է, երեխէքս մոռացել են ինձ. ես էլ
գնալու տեղ չունիմ...

Մակարը գետնիցը չէր վեր կենում, երեսը
գետնին էր քսում և ասում.

— Օհան ապէր, ներքի: Մտրակով ծեծ ու-
տելն ինձ համար աւելի թեթեւ էր, քան թէ
այժմ քո երեսիդ մտիկ տալը... Իսկ դու էլի
խղճացիր ինձ— չմատնեցիր: Ներքի ինձ, ի սէր
Քրիստոսի: Ներքի ինձ, որ մի անիծուած չա-

դագործ եմ:—Եւ նա սկսեց հեկեկալով լաց լինել:

Աքսենովը երբ որ տեսաւ՝ Մակարը լաց է լինում, ինքն էլ սկսեց լաց լինել և ասաց.

—Աստուած ինքը թող ների քեզ. կարելի է, ես հարիւր անգամ քեզնից վատ եմ:

Եւ նա այլ ևս տան կարօտը չէր քաշում, քանդից դուրս գալ էլ չէր ուզում, այլ միայն իր վերջին ժամի վրայ էր մտածում:

Մակարն Աքսենովին ականջ չդրեց, յայտնեց, որ յանցաւորն ինքն է եղել: Երբ որ Աքսենովի յետ դռնալու հրամանը դուրս եկաւ,—նա արդէն մեռել էր:



	Թ. Գ.
11. Ուխտատուրք, գործ Վիրսէլ՝ Հառափի . . .	— 75
12. Գառնուկ և Լուսատունիկ, վեսեր Քրիստափոր Շմիդտի, թարգմ. Նուարդ. . .	— 25
13. Սայեաթ Նովա ազգային երգիչ . . .	— 5
14. Մենդեհան պատմութիւնը և Մայիսեան տօնը Ֆինլանդիայում . . .	— 10
15. Ագաթանգեղեայ պատմութիւն . . .	1 —
16. Դիւղական Խալիֆայ, Ա. Արարատեանցի . . .	— 50
17. Վանայ Սադ, պ. Գ. Շէրինցի . . .	— 75
18. Փնջիկ, գրեց Աղէքսանդր Արարատեանց . . .	— 20
19. Նամուս, վէպ, գրեց Նիրվանազադէ . . .	1 —
20. Ստեփաննոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, երկը. տպ. . .	2 —
21. Թիֆլիզեցոյ մտաւոր կեանքը. Տէր-Աղէքսանդրեանի. . .	1 —
Նոյնը ընտիր թղթի վրայ . . .	1 50
22. Դեռոնգ պատմագիր. . .	2 —
23. Սրբազան պատմ. հին ուխտի, Սահակ քհն. Սահակեանի. . .	— 30
24. Նոյնը ուսուցիչների համար . . .	1 75
25. Սոկրատէս, թարգմ. օր. Թեկղի Ստեփան. . .	— 10
26. Պատմ. Հայոց, Ս. Պարսաճեանի. . .	1 50
27. Ուղեցոյց Հերամապոսիւթեան, Միկլե-Շահնազարեանցի . . .	— 40
28. Ժամանակագրութիւն Հայոց, Յ. Դարգելի. . .	1 25
29. Վարդ-Ուէսլին, թարգմ. Ի. Յ. . .	— 10
30. Նալ և Դամայեանթի, թարգմ. Յով. Լալայեանց . . .	— 20

Նոյն տեղերում վաճառվում են նաեւ ընկերութեան
հետեւեալ գրքերը.—

1. Ուսումնարանների առողջապահութեան
հարցեր, բժ. Ա. Բարայեանի. . . . 1 —
2. Կրքեր և նոցա ազդեցութիւնը առող-
ջութեան վրայ, բժ. Ա. Բարայեանի. — 30
3. Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի. . . 2 —
4. Թորոս Լեոնի, Ծերենցի. . . . 1 —
5. Թէոդորոս Ուշտունի, Ծերենցի . . . 1 —
6. Երկունք Թ. դարու, Ծերենցի . . . 1 —

ԳԻՆՆ Է 7 ԿՈՊ.

4341

2013

